

Արձանագրություն

Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017թ. հոկտեմբերի 23-ի թիվ 7 նիստի

Դեկան Է. Գ. Մինասյանը ներկայացրեց օրակարգը, նշելով որ ունենք ինչպես ընթացիկ հարցեր՝ մենագրությունների, ծրագրերի երաշխավորություն, այնպես էլ դոցենտի գիտական աստիճան ստանալու համար դիմած երկու դասախոսի գործերի քննարկում և քվեարկություն:

1. Հեռակա ուսուցման ընդունելության արդյունքների և դասերի կազմակերպման հետ կապված հարցերի ներկայացում (զեկ.՝ դեկան Է. Գ. Մինասյան)

2. Ընթացիկ հարցեր (դոցենտի կոչում ստանալու համար քվեարկության կազմակերպում, ամբիոնների կողմից ներկայացված երաշխավորությունների հաստատում, այլ հարցեր):

1. Առաջին հարցի հետ կապված զեկուցեց դեկան Է. Մինասյանը, նշելով, որ արդեն ամփոփվել են հեռակա ուսուցման ընդունելության արդյունքները: Դրանք դրական են: Ֆակուլտետին հատկացված բոլոր տեղերը լրացվել են, նույնիսկ ունենք ավելի մեծ թվով ընդունվածներ, քան նախատեսված է: Այս ամենը հաշվի առնելով, հարկավոր է նախապատրաստվել հեռակա ուսուցման համակարգի կրթական գործընթացը կազմակերպելուն: Դեկանի տեղակալներ Վ. Հակոբյանը, Զ. Յախյանը և նիստին մասնակցող Հ. Մխոյանը ներկայացրին հիմնական անելիքները, ինչպես նաև ընթացիկ վիճակը:

2. Երկրորդ հարցի հետ կապված խնդիրները լսվեցին ըստ հերթականության:

2.1 Լսեցին – Հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր Ռաֆիկ Ա. Նահապետյանի “Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին” վերնագրով մենագրությունը հրատարակության երաշխավորելու հարցը:

Արտահայտվեցին– ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ պ. գ. դ., պրոֆ. Հ. Գ. Ավետիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ մենագրությունը կարևոր է հայերի մասին ազգագրական բնությի տեղեկությունների մեկտեղման ու գիտական շրջանառության մեջ դնելու տեսանկյունից: Մենագրությունը կարևոր է ինչպես գիտական, այնպես էլ համալսարանում կրթական գործընթացների կազմակերպման տեսանկյունից և առաջարկեցին այն երաշխավորել հրատարակության:

Որոշեցին՝

1. Հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր Ռաֆիկ Ա. Նահապետյանի “Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին” վերնագրով մենագրությունը երաշխավորել հրատարակության:

2.2 Լսեցին – Մշակութաբանության ամբիոնի ասպիրանտ Տաթևիկ Արմենի Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի ղեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Մշակութաբանության ամբիոնի վարիչ պ. գ. դ., պրոֆ. Հ. Լ. Պետրոսյանը:

Որոշեցին՝

1. Մշակութաբանության ամբիոնի ասպիրանտ Տաթևիկ Արմենի Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել “Հայկական թեման մեղալային մշակույթում (17-21-րդ դդ.)” վերնագրով (Թ. 00. 06 “Մշակութաբանություն” մասնագիտություն):
2. Գիտական ղեկավար հաստատել պ. գ. թ., մշակութաբանության ամբիոնի դասախոս Արմինե Լևոնի Զոհրաբյանին:

2.3 Լսեցին – Մշակութաբանության ամբիոնի ասպիրանտ Գոռ Ռաֆայելի Օրդյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի ղեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Մշակութաբանության ամբիոնի վարիչ պ. գ. դ., պրոֆ. Հ. Լ. Պետրոսյանը:

Որոշեցին՝

1. Մշակութաբանության ամբիոնի ասպիրանտ Գոռ Ռաֆայելի Օրդյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել “Անկախության դիակուրսը Հայաստանի և Լեհաստանի անցումային հասարակություններում. մշակութաբանական համեմատական վերլուծություն” վերնագրով (Թ. 00. 06 “Մշակութաբանություն” մասնագիտություն):
2. Գիտական ղեկավար հաստատել պ. գ. թ., Հնագիտության և ազգագրության ամբիոնի դասախոս Ադասի Զավենի Թադևոսյանին:

2.4 Լսեցին – Հայոց պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Միեր Սուրենի Հովհաննիսյանի դիմումը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ:

Արտահայտվեցին- ֆակուլտետի ղեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, պ. գ. դ., պրոֆ., Հայոց պատմության ամբիոնի վարիչ Ա. Ե. Մովսիսյանը:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Բ. Գրիգորյանը նշեց, որ Մ. Ս. Հովհաննիսյանը դիմել է դոցենտի կոչում ստանալու համար, ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Նրա ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում հայցելու պայմաններին, քննարկվել են մրցութային հանձնաժողովում և երաշխավորվել գիտական խորհրդում քվեարկվելու համար:

Հայոց պատմության ամբիոնը ևս իր նիստում միաձայն երաշխավորել է Մ. Հովհաննիսյանի թեկնածությունը:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Բ. Գրիգորյանը ներկայացրեց Մ. Ս. Հովհաննիսյանի փաստաթղթերը, նշելով, որ նա 2010թ. աշխատում է հայոց պատմության ամբիոնում՝ որպես ասիստենտ: 2009թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում դասավանդում է ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մասնագիտական դասընթացներ, ղեկավարում է կուրսային, ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր: 2017-2018 ուս. տարում նրա ծանրաբեռնվածությունը կազմում է 535 ժամ, որոնցից 388-ը լսարանային ժամեր են:

Մ. Հովհաննիսյանը դասախոսական աշխատանքին զուգահեռ զբաղվում է նաև գիտահետազոտական աշխատանքով, 2012թ.-ից ԵՊՀ Հայագիտության հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրենն է: Հեղինակ է 16 գիտական ու մեթոդական աշխատանքների: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո հեղինակել է 8 գիտական ու գիտամեթոդական հոդված և մեկ ուսումնամեթոդական աշխատանք: Մասնակցել է բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովների: Մ. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց պատմության նոր և նորագույն շրջանի, Հայագիտության համացանցային քարոզչության հիմնախնդիրները

Հանձնաժողովը միաժամանակ նշում է, որ Մհեր Հովհաննիսյանը իր գործի մեջ բանիմաց է և ակտիվ, իսկ ուսանողության նկատմամբ՝ ուշադիր ու պահանջկոտ: Նա բնավորությամբ բարեկիրթ է, պատրաստակամ իր օգնությունը բերելու ֆակուլտետի հետ կապված խնդիրների լուծմանը: Նա վայելում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության սերն ու հարգանքը: Մհեր Հովհաննիսյանի վերջին երեք տարվա ուսանողների սոց. հարցումների միջին գնահատականը կազմում է 4,64 միավոր:

Մրցութային հանձնաժողովը ևս ելնելով վերոհիշյալից երաշխավորում է պատմ. գիտ. թեկնածու Մհեր Հովհաննիսյանին հայցելու դոցենտի կոչում:

Ելույթ ունեցողները ևս բարձր գնահատեցին Մ. Հովհաննիսյանի գիտական ու մանկավարժական գործունեությունը և առաջարկեցին թույլատրել քվեարկվել ֆակուլտետի գիտական խորհրդում:

Քվեարկությունը կազմակերպելու համար ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ պ. գ. դ., պրոֆ. Ռ. Ա. Նահապետյան /նախագահ/, անդամներ՝ պ. գ. դ., դոց. Հ. Ժ. Հարությունյան, պ. գ. թ., դոց. Մ. Ռ. Գաբրիելյան:

Քվեարկության ավարտից հետո մրցութային հանձնաժողովը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Քվեարկությանը մասնակցել է ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներից 26-ը: Քվեատուփում հայտնաբերվել է 26 քվեաթերթիկ: Վավեր քվեաթերթիկները թիվը՝ 26:

Մհեր Սուրենի Հովհաննիսյանի թեկնածության օգտին կողմ քվեաթերթիկների քանակը՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայն:

Է. Գ. Մինասյանն առաջարկեց հաստատել քվեարկության արդյունքները:

Քվեարկության արդյունքները հաստատվեցին միաձայն:

Որոշեցին՝

1. Հաստատել քվեարկության արդյունքները:
2. Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին՝ Միեր Սուրենի Հովհաննիսյանին սահմանված ընթացակարգով դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

2.5 Լսեցին – Մշակութաբանության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու Սառա Աշոտի Նալբանդյանի դիմումը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ:

Արտահայտվեցին- ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, պ. գ. դ., պրոֆ., Մշակութաբանության ամբիոնի վարիչ Հ. Լ. Պետրոսյանը:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Բ. Գրիգորյանը նշեց, որ Ս. Նալբանդյանը դիմել է դոցենտի կոչում ստանալու համար, ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Նրա ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում հայցելու պայմաններին, քննարկվել են մրցութային հանձնաժողովում և երաշխավորվել գիտական խորհրդում քվեարկվելու համար:

Մշակութաբանություն ամբիոնը ևս իր նիստում միաձայն երաշխավորել է Ս. Նալբանդյանի թեկնածությունը:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Բ. Գրիգորյանը ներկայացրեց Ս. Ա. Նալբանդյանի փաստաթղթերը, նշելով, որ նա 2011 թվականից առաջօր աշխատում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի մշակութաբանության ամբիոնում: Նա պատմության ֆակուլտետի մշակութաբանության բաժնում և ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում դասավանդում է ընդհանուր ու հատուկ մասնագիտական դասընթացներ, օտարերկրյա ուսանողների համար դասախոսություններ է կարդում անգլերեն և իտալերեն լեզուներով, ղեկավարում է կուրսային, ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր: 2017-2018 ուստարում նրա ծանրաբեռնվածությունը կազմում է 377 ժամ, որոնցից 124-ը լսարանային ժամեր են:

Ս. Նալբանդյանը դասախոսական աշխատանքին զուգահեռ զբաղվում է նաև գիտահետազոտական աշխատանքով: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո Ս. Ա. Նալբանդյանը հեղինակել է ինը գիտական հոդված, մեկ մեթոդական ձեռնարկ և մեկ մեթոդական ծրագիր: Նույն ժամանակահատվածում մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների, որոնցում կարդացած զեկուցումները հրատարակվել են համապատասխան ժողովածուներում (հայերեն, ռուսերեն, անգլերեն):

Հանձնաժողովը միաժամանակ նշում է, որ Սառա Նալբանդյանը իր գործի մեջ բանիմաց է, իսկ ուսանողության նկատմամբ ուշադիր և պահանջկոտ: Բնավորությամբ բարեկիրթ է, մարդամոտ ու ակտիվ, հոգատար իր գործընկերների նկատմամբ: Նա պատրաստակամ է իր օգնությունը բերելու ֆակուլտետի հետ կապված խնդիրների լուծմանը: Սառա Նալբանդյանը վայելում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության սերն ու հարգանքը: Նրա վերջին երեք տարվա ուսանողների սոց. հարցումների միջին գնահատականը կազմում է 4,5 միավոր:

Մրցութային հանձնաժողովը ևս էլնելով վերոհիշյալից երաշխավորում է արվեստագիտության թեկնածու Սառա Նալբանդյանին հայցելու դոցենտի կոչում:

Ելույթ ունեցողները առաջարկեցին թույլատրել Ս. Նալբանդյանին քվեարկվել ֆակուլտետի գիտական խորհրդում:

Քվեարկությունը կազմակերպելու համար ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ պ. գ. դ., պրոֆ. Ռ. Ա. Նահապետյան /նախագահ/, անդամներ՝ պ. գ. դ., դոց. Հ. Ժ. Հարությունյան, պ. գ. թ., դոց. Մ. Ռ. Գաբրիելյան:

Քվեարկության ավարտից հետո մրցութային հանձնաժողովը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Քվեարկությանը մասնակցել է ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներից 26-ը: Քվեատուփում հայտնաբերվել է 26 քվեաթերթիկ: Վավեր քվեաթերթիկները թիվը՝ 26:

Սառա Աշոտի Նալբանդյանի թեկնածության օգտին կողմ քվեաթերթիկների քանակը՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայն:

Է. Գ. Մինասյանն առաջարկեց հաստատել քվեարկության արդյունքները:

Քվեարկության արդյունքները հաստատվեցին միաձայն:

Որոշեցին՝

1. Հաստատել քվեարկության արդյունքները:
2. Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին՝ Սառա Աշոտի Նալբանդյանին սահմանված ընթացակարգով դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ
պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյան

Խորհրդի գիտական քարտուղար
պ. գ. թ., դոց. Մ. Ռ. Գաբրիելյան